# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2016 թվականի No58

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

համայնքի ավագանին **որոշում է**

հաստատել համայնքի նորընտիր ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի №15 անդրանիկ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու և համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 30-ի N36-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2017 թվականի հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը սահմանելու մասին
3. Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 30-ի N38-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունու համայնքապետարանի աշխատակազմի, «Մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Զովունիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N57-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքապետարանի ծառայողական «NISSAN» ավտոմեքենայի վաճառքի համաձայնություն տալու մասին:

10. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող թիվ 0026-0020 և թիվ 0026-0044 ծածկագրերի տակ գտնվող հողատարածքները ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
11. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքապետարանի համար նոր ծառայողական և աղբատար ավտոմեքենաների ձեռք բերման մասին:
12. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին:
13. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
14. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N45 և 2016 թվականի նոյեմբերի 7-ի N51 որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2016 թվականի No59-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՔՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N36-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 71-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի պահանջներով համայնքի ավագանին՝ ***որոշում է*** .

1.Ընդունել համայնքի ավագանու կանոնակարգը համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունիի գյուղական համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N36-Ն որոշումը:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«28» նոյեմբերի 2016 թվականի No60

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2017 թվականի հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Ձորունի համայնքի ավագանու 2016 թվականի

նոյեմբերի 28-ի № 60 որոշման

Կ. Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՁՈՐՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| Ամիսը | Համայնքի ավագանու նիստի օրը | Համայնքի ավագանու նիստի օրակարգային հարցեր | |
|---|---|---|---|
| Հունվար | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | համայնքի բյուջեի 4-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Փետրվար | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | համայնքի զարգացման ծրագրի կատարման հաշվետվություն | |
| Մարտ | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն | |
| Ապրիլ | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | համայնքի բյուջեի 1-ին եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Մայիս | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | հանրությանը ներկայացվող հաշվետվության քննարկում | |
| Հունիս | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | համաձայնություն հողային հաշվեկշռին | |
| Հուլիս | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | բյուջեի 2-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Օգոստոս | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման մասին | |
| Սեպտեմբեր | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | | |
| Հոկտեմբեր | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | համայնքի բյուջեի 3-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Նոյեմբեր | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | | |
| Դեկտեմբեր | ամսվա 2-րդ երկուշաբթի օրը | տեղական հարկերի, տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին | |
| | | համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին | |
| | | համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին | |
| | | Հաջորդ տարվա բյուջեի հաստատում | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2016 թվականի No61

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի քանակական կազմում ընդգրկել ավագանու 3 (երեք) անդամի:
2. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմում ընդգրկել ավագանու անդամներ՝ Արմեն Բարսեղյանին, Միհր Սիմոնյանին և Հարություն Պետրոսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2016 թվականի No62

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N38-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջով՝
համայնքի ավագանին ***որոշում է*** .

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» N38-Ա որոշումը:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2016 թվականի No63-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով՝
համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2017 թվականի համար տեղական տուրքերը և վճարները սահմանել հետևյալ դրույքաչափերով՝ համաձայն հավելվածի:

Կողմ 8 Դեմ 3 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ջովունի համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 28-ի № 63-Ն որոշման
Կ. Տ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

բդ) 3001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 50 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 2500դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 60 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 800 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 400 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1 000 դրամ:

9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

11 Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ:

12. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ.

13. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10000դրամ:

14. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել 5000դրամ:

15, Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ համայնքի յուրաքանչյուր տնտեսության համար աղբահանության ամսվա վճար սահմանել 500 դրամ:

16. շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել 3000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«28» նոյեմբերի 2016 թվականի No64

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3)-րդ կետի պահանջով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ղեկավարի վարձատրության չափը 390000 /երեք հարյուր իննսուն հազար/ դրամ:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«28» նոյեմբերի 2016 թվականի N065

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի, «ԶՈՎՈՒՆԻԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԵՎ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջով՝
համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքապետարանի աշխատակազմի, «Մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Զովունիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի, հավելված 2-ի, հավելված 3-ի և հավելված 4-ի:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջովունի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի № 65 որոշման
Կ. Տ.

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## Երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 11

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Երաժշտական դպրոց ՀՈԱԿ | տնօրեն | | | 1 | 85000 | | | 85000 |
| 2 | | Հաշվապահ | | | 1 | 80000 | | | 80000 |
| 3 | | Մանկավարժ | | | 8 | 76200 | | | 723900 |
| 4 | | Տեխ. Աշխատող | Տեխնիկական սպասարկման | | 1 | 102000 | | | 51000 |
| | Ընդամենը | | | | 11 | | | | 939900 |

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի № 65 որոշման

## ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Մշակութային կենտրոն ՀՈԱԿ-ի աշխատակազմի
Աշխատակիցների թվաքանակը՝ 9

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Մշակութային կենտրոն ՀՈԱԿ | տնօրեն | | | 1 | 110000 | | | 110000 |
| 2 | | Տն. Տեղ. կազմակերպիչ | | | 1 | 90000 | | | 90000 |
| 3 | | Հաշվապահ | | | 1 | 80700 | | | 80700 |
| 4 | | Երաժիշտ խմբավար | | | 1 | 76200 | | | 76200 |
| 5 | | Գրադարանի վարիչ | | | 1 | 89500 | | | 89500 |
| 6 | | Հյուսն | Տեխնիկական սպասարկման | | 1 | 76200 | | | 76200 |
| 7 | | Սպորտի և երիտ. Սեկտրի վարիչ | | | 1 | 80700 | | | 80700 |
| 8 | | Գրադարանավար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 80700 | | | 80700 |
| 9 | | Տեխ. Աշխատող | Տեխնիկական սպասարկման | | 1 | 90000 | | | 90000 |
| | Ընդամենը | | | | 9 | | | | 774000 |

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016
թվականի նոյեմբերի 28-ի № 65 որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## Զովունիի Մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակազմի
Աշխատակիցների թվաքանակը՝ 19

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավ ճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Զովունիի մանկապարտեզ ՀՈԱԿ | տնօրեն | | | 1 | 150000 | | | 150000 |
| 2 | | Հաշվապահ | | | 1 | 102600 | | | 102600 |
| 3 | | գործավար | | | 1 | 76200 | | | 76200 |
| 4 | | Հաշվետար-գանձապահ | | | 1 | 102600 | | | 102600 |
| 5 | | Բուժքույր | | | 1 | 76200 | | | 76200 |
| 6 | | Դաշնակահար երաժիշտ դաստիարակ | | | 1 | 76200 | | | 76200 |
| 7 | | Դաստիարակ | | | 4 | 92700 | | | 370800 |
| 8 | | Դաստիարակի օգնական | | | 4 | 76200 | | | 304800 |
| 9 | | Խոհարար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 92700 | | | 92700 |
| 10 | | լվացարար-հավաքարար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 110000 | | | 110000 |
| 11 | | Օժանդակ բանվոր | Տեխնիկական սպասարկման | | 0,5 | 110000 | | | 55000 |
| 12 | | խոհարարի օգնական | Տեխնիկական սպասարկման | | 1 | 76200 | | | 76200 |
| 13 | | տնտեսվար | | | 1 | 76200 | | | 76200 |
| 14 | | Պահակ | Տեխնիկական սպասարկման | | 0,5 | 110000 | | | 55000 |
| | Ընդամենը | | | | 19 | | | | 1724500 |

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջովունի համայնքի ավագանու 2016
թվականի նոյեմբերի 28-ի № 65 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

**Ջովունիի համայնքապետարանի աշխատակազմի**

Աշխատակիցների թվաքանակը՝ 22

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիր | հաստիքային միավորը | Պաշտոնային | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | | 1 | 390000 | | | 390000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | | 1 | 190000 | | | 190000 |
| 3 | | Համայնքի ղեկավարի խորհրդական | Հայեցողական | | 1 | 160000 | | | 160000 |
| 4 | | Համայնքի ղեկավարի օգնական | Հայեցողական | | 1 | 160000 | | | 160000 |
| 5 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 220000 | | | 220000 |
| 6 | | Գլխավոր մասնագետ | Համայնքային ծառայության | 2.3-1 | 1 | 200000 | | | 200000 |
| 7 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2, | 1 | 180000 | | | 180000 |
| 8 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-3 | 1 | 180000 | | | 180000 |
| 9 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 178000 | | | 178000 |
| 10 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-2 | 1 | 178000 | | | 178000 |
| 11 | | Հարկահավաք | Տեխնիկական սպասարկման | | 2 | 100000 | | | 200000 |
| 12 | | Համակարգչային- օպերատոր | Տեխնիկական սպասարկման | | 1 | 135000 | | | 135000 |
| 13 | | Տրակտորիստ-մեխանիզատոր | Տեխնիկական սպասարկման | | 1 | 130000 | | | 130000 |
| 14 | | Տրակտորիստ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 130000 | | | 130000 |
| 15 | | Բանվոր | Տեխնիկական սպասարկման | | 3 | 130000 | | | 390000 |
| 16 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | | 1 | 90000 | | | 90000 |
| 17 | | պահակ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 90000 | | | 90000 |
| 18 | | Գերեզմանատան պահակ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 90000 | | | 90000 |
| 19 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 130000 | | | 130000 |
| | Ընդամենը | | | | 22 | | | | 3421000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2016 թվականի No66-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին» N57-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Հատված 2-ի՝ Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման
10.7.1 Սոցիալական հատուկ արտոնություններ
«7000.0» թիվը փոխարինել «8000.0» թվով
11.1.2 ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ
«6500.0» թիվը փոխարինել «5500.0» թվով

2. Հատված 3-ի՝ Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ՝
Այլ նպաստներ բյուջեից
4729 հոդվածի թիվը «7000.0» թիվը փոխարինել «8000.0» թվով
պահուստային միջոցներ
4891 հոդվածի «6500.0» թիվը փոխարինել «5500.0» թվով

3. Հատված 6-ի՝ Համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման
10.7.1 սոցիալական հատուկ արտոնություններ
4729 հոդվածի «7000.0» թիվը փոխարինել «8000.0» թվով
11.1.2 համայնքի պահուստային ֆոնդ
4891 հոդվածի «6500.0» թիվը փոխարինել «5500.0» թվով

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2016 թվականի No67

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ «NISSAN» ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն համայնքային սեփականություն համարվող գույքը՝ NISSAN X-TERRA մակնիշի 373LL70 պետհամարանիշի ծառայողական ավտոմեքենան օրենքով սահմանված կարգով օտարել:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2016 թվականի No68

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹԻՎ 0026-0020 ԵՎ ԹԻՎ 0026-0044 ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 61-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի պահանջներով ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

Զովունի համայնքի վարչական տարածքում՝ 07-029-0026-0019 ծածկագրի տակ գտնվող Գոհարիկ Սահակյանի սեփականության իրավունքով պատկանող 0.135հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատարածքին կից թիվ 0026-0020 և թիվ 0026-0044 ծածկագրերի տակ գտնվող 0,07406հա հողատարածքները ուղղակի վաճառքի միջոցով օրենքով սահմանված կարգով վաճառել Գոհարիկ Սահակյանին:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«28» նոյեմբերի 2016 թվականի No69

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ և ԱՂԲԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի և 50-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

Համայնքի բյուջեի հաշվին օրենքով սահմանված կարգով ձեռք բերել ծառայողական նոր ավտոմեքենա և աղբատար ավտոմեքենաներ:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«28» նոյեմբերի 2016 թվականի No70-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջներով՝
համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Զովունի համայնքի 2017 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«28» նոյեմբերի 2016 թվականի No71

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 8)-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու անդամ Սիմոն Մամբրեյի Սիմոնյանի լիազորությունները, հիմք ընդունելով նրա կողմից ներկայացրած հրաժարականի դիմումը:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2016 թվականի No72

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N45 ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի N51 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի բ) ենթակետի պահանջներով ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի նոյեմբերի 11-ի N01/15.1/4489-16 և 2016 թվականի նոյեմբերի 28-ի N07/15.1/4706-16 գրությունները՝
համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծում առանձին հողակտորների նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին» N45 և 2016 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N51 որոշումները ճանաչել ուժը կորցրած:

Կողմ 11 Դեմ 0 Ձեռնպահ 0

Սիմոն Սիմոնյան
Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ